# 19. ՏԵՐՏԸՐՈՉ ԱԽՉԻԿ

Տերտըրոչ կնիկ կմեռնի: Տերտեր կառնի կընգյան սոլեր, կտանի քյաղաքյ հըմեն կֆըռայույի, կասի. - Էսա սոլեր վիր ոտնով էլնի, ես էն կառնեմ:

Իսկի մարթու ոտնով չէլնի: Կառնի իրիկուն փեռր-փեռշման կուգյա տուն:

Քյանի մ'օր կընցընի: Մեկ օր ախչիկ ոտ կմըտույի էտա սոլի մեչ: Տերտըրոչ ախչըկա ոտք վերեն կէլնի, կտիսնա սոլն մեկ ախչըկա ոտնով:

Կասի. - Ահա, ես պիտի քյե առնեմ, ախչիկ:

Ախչիկ կասի. - Յա՛, ըտըսնա̈ պա̈ն չէլնի:

Տերտեր կասի. - Էլնի, չէլնի սոլ քյո ոտնովն էլա̈վ՝ քյե կառնեմ:

Ախչիկն էլ ճարահատ, կասի. - Աղեկ, որ տյու կուզես, ես էլ քյե կառնեմ:

Խեր կէրթա̈ տյուս, ախչիյ կնստի կուլա̈, կմըռմըռա, աստծուն կաղաչի, կինի պերայիսըվեր, կքյընի:

Էրազի մեչ կուգյան իննր կասեն. «Առ քյե խամար տաս ավուր խաց-ճյուր, մըտի ճրախկըյի մեչ, քյո խոր ծեռնեն կփոթընես»:

Ախչիկ քյընուց կակխի, կառնի ութ-տաս ավուր խաց-ճյուր, կէլնի կմտնի ճրախկըլի մեչ:

Իրիկուն խեր կուգյա տուն: Կտիսնա ախչիկ չըկա: Դեոր կփտռի, չկանա կընդընի: Կմիամտվի: Կմնա մեկ օր, բիրդա̈ն կինի միտ, թե ուրենց խին ճրախկալըմ կա: Կասի. «Առնեմ տանեմ էսա ճրախկալ ծախեմ»:

Թակավրու լաճ էն դեխեն կուգյա, կասի. «Հաքի իմ էօղի ճրաք քյիչ ի, էսա մեյն էլ առնեմ, տանեմ»:

Կառնի, կտանի կտնի ուր էօղի մեչ:

Էն մեկել առատուն աշչին կերակուլ կտանի թակավրու լաճուն:

Ախչիյ կիրիշկա ըռդիխ, էնդիխ. տեսավ որ մարթ չկա, կէլնի տյուս, էն կերակուրներ հըմեն կուտի, էլըմ կփախնի, կէրթա կմտնի մեչ ճրահկըլին:

Թակավըրու լաճ կուգյա, կտիսնա որ ուր կեր կիրեր են, ծեն չխանե:

Էրկ'օր, իրեքյ օր ըսկընա կտիսնա, կասի. - Յա ըսել է՝ ես աշչու լակ-կեր ուտողն եմ. մեյ կըտոր շուրվա կպյիրի, տնի իմ առաձ:

Կէլնի չնոտ-չնոտ կէրթա դիխ աշչին:

Կասի. - Ընչի՞ ըսկընա կանես, կերեր կուտես, լակեր կպյիրես զիկ:

Կասի. - Թակավըրու լաճ, ես կերակուրներ կպյիրեմ, կտնեմ քյո էօդի մեչ, կթողնեմ կուգյամ: Որ ըսկունի, ուտող քյո էօդի մեչնեն է:

Գյախտիկ տեղըմ պախկըվի, խենքյ վո՞վ ի, կուգյա քյո կերեր կուտի:

Թակավըրու լաճ էն մեկել օր կմտնի թախթի իտև, աշչին կերեր կպյիրի, կդնի էօդեն, կթոնի կէրթա:

Թակավըրու լաճ կտիսնա մեյ խա խուրնի-խրեղեն ախչիյմ ճրախկըլից կէլնի, կուգյա կնստի վեր սեղնին: Շուտըմ կխասնի ախչըկան կպռնի: Կուրախնան վեր մեյ-մըկու, մեյտեղ կնստեն, խաց-կերակուր կուտեն:

Խաց կուտեն, կպըռծնեն, կառնի կէրթա մոտ ուր խեր:

Ուր խոր կպատմի ուր գյլխու գյայած: Կասի. - Էսա ախչիկ պիտի փսակես վեր զի:

- Շատ աղեկ, - կասի:

Խարսնիսի թռդմրյուք կանեն: Լաճ կփսակեն:

Տարիմ' էրկու կընցըդնի վերեն, լաճ տղեմ կէլնի ինոնց:

Տերտերն էլ սալախով-սուլուխով կխասկընա, թե ախչիյն էլե մտե ճրախկալ, կընայե թակավըրու տուն, էլե խարս:

Մեկ օր տերտեր կէրթա թակավըրու տուն, մըսաֆր կէլնի: Կիշեր գյախտիկ կէրթա թակավըրու լաճու էօդեն, ուր ախչըկա ջեռքեն չախուն կխանի, ախչըկա տղեն ուրուրոցի մեչ կմորթի: Կտառնա արընթըթախ չախուն կթոլի ախչըկա ջեռք, կթոնի կէրթա:

Առատուն կէլնեն, տիսնան տղեն չի ակխի: Մեր կէրթա տղի իրես կպանա, կտիսնա որ տղեն մորթուկ՝ գյեռ ուրուրոցի մեչ:

Կէլնի կվռզի մո թակավոր, ջյույռք կտանի:

Թակավորն ի, կէլնի դրլրլ կուտա կանչել, որ վով գյա ասի, թե ուր թոռն ըսպանող վով ի, ինոր խարիր ոսկի փարա կխոստա:

Տերտեր կուգյա կասի. - Թակավոր ապրած, վիր ջեռք արընոտ չախու կա, գյեռ էն ի մորթե:

Հըմենի ջեռք կաչկեն, կտիսնան՝ իսկի մարթում ջեռք արնոտ չախու չկա:

Տերտեր կասի. - Էսա հըմենի ջեոք աչկեցիր, դե մեյ խատ էլ քյո խարսի ջեոըն աչկի:
Թակավոր կաչկի խարսի ջեոք, կտիսնա արնոտ չախուն գյեռ խարսի ջեոք:
Կթքյի, կմրի խարսին, լաճու խետ մեյտեղ կուտան մոր գյիրկ, տնեն կմլեն տյուս խարսին:
Խարս տըղեն կառնի կէրթա, մեյ խատ ավեր քեոշկի մեչ կնստի:
Իրեք օր կիշեր-ցերեկ կուլա, տղի մեչ խոզի կուզյա, վիզ կկպնի ուր տեղ:
Ժամանայըմ կընցընի վեր իտոր:
Մեկ օր թակավրու լաճու ավչիք սարից կուգյան, շատ անութի կէլնեն, կասեն. - Էսա լապըզտրակ ո՞ր տեղ իփենքյ, ուտենքյ, չում էրթանք խասնենք տուն:
Կտիսնան զատու պըստի՞կ լեռըմ կէրևա: Կասդ կանեն էն յըոսյուն, կուզյան: Կուզյան կմտնեն ներս, կտիսնան մեյ խա ջահիլ-ջիվան կընիյըմ, չորս տարեկան լաճ տղեմ' առաճ:
- Մորքյուր, - կասեն, - կրակ ունե՞ս, մեյ խատ էսա միսն իփենքյ ուտենքյ:
- Խա, - կասի, - տրեքյ էնա բուխուրեկի մեչ, իփեքյ:
Կտնեն վեր կրակին, կիփեն: Ինչը՞ն կանեն, կընիյ չէրթա խետկեր ուտի: Մեկ իան կկիսին, կուտան տղին:
Կէլնեն, էնտեղեն կթողնեն կէրթան, կխասնեն թակավրու լաճու մոտ:
Կասեն. - Շահզադա, ֆըլան տեղ, ըսնա կնիկըմ տեսանք, շա խորոտ էր, քո լայեղ կնիկմ' էր: Կընա' առ:
Կասի. - Էրթանքյ մեյ խա' տիսնանքյ խեմ:
Կէլնեն մեյտեղ կէրթան կնգյան քյեոլիկ:
Կնիկ կիմնա թե պիտի էն օր իրիկ պիտի գյա էնտեղ, ուր տըղին կասի. - Քալամ, էսօր մեր տուն խուր կուզյա, խետ որ կուզյան կնստեն, տես հա, ասա՝ մարե', ասա':
Թակավրու լաճ ինան ավչիք կուզյան կնգյան տուն մըսաֆիր կէլնեն:
Խետ որ կմտնեն ներս, կնստեն, տղեն կէրթա կնստի թակավրու լաճու գեոքյ, հա կասի՝ մարե', ասա':
Շատ ըսկուն կասի, էն էլ կասի. - Ջանըմ, էսա տըղեն ընչի՞ հա կասի՝ մարե, ասա', մարե ասա': Ասա, հեմ ի՞նչ ի, կասես:
Մերն կքաշլայի ուր խեքյաթն անել:
Թակավրու լաճն ականչ կանի, կտիսնա որ էսա ուր կնիյն ի, տըղեն էլ՝ ուր տըղեն:
Կասի. «Չէլնի թե, էսա զի չի ճանչընա»:

Շոփըմ ուր կխանի էրեվուս:

Կուրախանա վեր կընգյան: Կառնի խե փղին, կէրթա ուր փուն:

Կճամխի, փերփեր կպիրի: Կթալի վարված կրակի մեչ, կիրիփի, կառնի ուր կընիկ փըղեն, կնսփի: